



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ՊԱՐՈՆ ՏԻՎԱԼԻ

ԱՂՁԻ ԿՆԵՐԸ

ԿԱՄ

ՅԱՂԹԱՆԱԿ ԲԱՐԵՎՐԹ ՈՒԹԵԱՆ



Ի Կ. ՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ե. ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ



ՊԱՐՈՆ ՏԻՒՎԱԼԻ


ԱՂՁԻԿՆԵՐԸ

ԿՍՄ

ՅԱԼԹԱՆԱԿ ԲԱՐԵԿՐԹՈՒԹԵԱՆ

Ի ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԷ Խ .

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ



Ի ինդրոյ՝ արցունատիմ դատանեկաց ,
Թողմաս եւ Երբայեջ արցալից
ջաւակաց մեծադատիւ Պետրոս արցալի
խորասանճեան :



Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Յ . ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

= 1853 =

6230/10/14



ՊԱՐՈՆ ՏԻՒՎԱԼԻ

ԱՂՋԻԿՆԵՐԸ

Կ Ա Մ

ՅԱՂԹԱՆԱԿ ԲԱՐԵԿՐԹՈՒԹԵԱՆ

ՊԱՐՈՆ ԱՂՋԻԿԻՆ ՀԱՐՈՒՍՏ
Ե միանգամայն ամեն տեսակ
ուսմանց մէջ կրթուած վա-
ճառականը՝ երեսուն ու երկու
տարու էր, իրեն սրտին յար-
մար քսանըմէկ տարեկան շը-
նորհօք համեստ աղջկան մը
հետ կարգուեցաւ : Երբոր 50
տարեկան էր, աս 18 տարուա-
նը մէջ՝ տասը զաւկի հայր ե-
ղաւ, 6 մանչ, 4 աղջիկ : Աս
միջոցին՝ իր կնոջը եղբայրը մեծ
ճախորդու թիներու հանդի-
պելով վաճառականու թեանը

մէջ, ցաւէն, հողէն և արտա-
 մութենէն ինկաւ մեռաւ, և
 հինգ հատ որք թողուց երեք
 մանչ և երկու աղջիկ: Աս ու
 զորմածասիրտ սարոնն Առլըվի-
 լը շի կեցաւ, շի սպասեց, որ
 իր կինը աս եղբօրը զաւակա-
 ցը համար իրեն աղաչէ, խեղճ
 որբերուն ճար մը ընելու.
 այլ ինքը մէկէն սրտէն շար-
 ժուած ըսաւ. ահա՛ աստուած
 մեզի հինգ զաւակ ալ մէկէն
 տուաւ. թողունք մի զասոնք
 դուրսը, աստուած չընէ, այլ
 որդեգիր ընենք, տներնիս առ-
 նենք և մեր տասն զաւկընե-
 րուս հեա՛ սրով կ'ըլլան տասնը-
 հինգ, կրթենք, սորվեցնենք,
 մարդ ընենք ասոնք: Աս մաս-

նաւորապէս մանչերը՝ որ ինք
 հատ են և դուն աղջիկները՝
 որ վեց հատ են : Չըլանք ա
 սոնց միայն մարմնաւոր ծը
 նողք և ազգական, այլ և քա
 ղաքական և հոգեւոր, վա
 սըն զի ի՞նչպէս կրնանք ցըր
 ուել այսքան դաւկրները՝ ինք
 մանչ վեց աղջիկ զանազան դըս
 րոցներու և վարժարաններու
 մէջ՝ իրենց զանազան տարիքին
 յարմար : Այս բան մը կը մըտ
 մըտամ, և միտքս սրոշեցի որ
 մեր աչքին դիմացը, մեր ձեռ
 քին տակը, կարգով, կանոնով,
 բարի վարքով և գիտու թի
 ներով զասոնք մեծցնենք : Աւ
 իր խորհուրդը կնոջը յայտնեց :
 Աւստի կամաց կամաց ձեռքը

Էտ քաշեց իր մեծամեծ ա-
 ռուտուրքէն, և իւր հարըս-
 տու թիւնը ամեն փորձանքնե-
 րէ հեռու ապահով տեղ դը-
 րաւ, որուն եկամուտը՝ պէտք
 եղածէն ալ աւելի էր, և Փա-
 րիզէն հինգ մղոն հեռու Ռօշ-
 վիլ գեղը մէկ մեծ պալատ մը
 ծախու առաւ՝ այգիներով,
 անտառներով, ծաղկոցներով,
 ուր գնաց տունով տեղով աս-
 տանը հինգ տղոցմով, որոնց
 մէջ ամենէն մեծը 16 տարու
 էր և էն պզտիկը 5 տարեկան:
 Հոն ան մեծամեծ սրահնե-
 րուն և սպարաններուն մէջ՝
 որոշեց կարգաւորեց գրքա-
 տուն, ուսումնարան, աշխար-
 հացոյցներով, երկրագունտ

ներով և գիտութեան վերա-
 բերեալ պատկերներով. վեր-
 ջապէս իր պալատը մէկ կա-
 տարեալ փառաւոր դպրա-
 տուն մը շինեց աս տղոց հա-
 մար : Ասկէ զատ մէկ սենեակ
 մը պատրաստեց աղջկանց ա-
 սեղնագործութեան (քերկէֆ
 բանելու) և կար կարելու
 համար , որ տիկիներ կը բանար
 կը գոցէր և անոնց կ'առաջ-
 նորդէր : Արահ մ'ալ պատ-
 րաստեց մանչերուն՝ հիւսնու-
 թեան , ճախարակագործուէ ,
 դարբնութեան և ասոնց նը-
 ման օգտակար դըօսանաց հա-
 մար : Կարգ կանոն դրաւ քա-
 լելու , խաղալու , պառկելու ,
 ելլելու , ուտելու և այլն : Քիչ

բայց համեատ ծառաներ
 տանը մէջ վարձեց, որ չըլլայ
 թէ շատ ըլլալով տղաքը գլխէ
 հանեն՝ անոնց շողոքորթութի
 ընելով, և կեղծաւորաբար՝
 գաղտնի անոնց մանկական կիր-
 քերուն ծառայեն տանտիրոջ
 զաւկներ ըլլալնուն համար:
 Բայց մէկը ելլէ ըսէ, թէ ա-
 սոնք աղէկ, բայց տեսնենք
 ո՞ւր պատրաստեց սենեակ մըն
 ալ իբր բանտ, ո՞ւր գաւաղան
 և այլ պատժելու գործիքներ՝
 ասոնց յանցանքը, զանցա-
 ռութիւն խրատելու և զսպե-
 լու համար, որովհետև ասոնք
 իր տղաքն են, պղտիկուց հե-
 տէ երես ելած են, ընտո՞ր այս
 խիստ կարգի կանոնին կրնան

գալ և պահել: Ասոր կը պա-
տասխանենք, թէ այդ բանը
անոր մտքէն անգամ չէր անց-
նէր: Ինչու որ, մէկ կը թուած
խելացի հայր մը՝ շատոնց վրէ-
գիտէ իր ընելիքը:

Ասանկ ծնողք տղին օրօրոցէն
գիտեն, ընտո՞ր շտկեն զար-
դարեն տղին բնութիւնը, և
չատ քիչ իրենց գիտաւորու-
թեանը զանհկա մօտեցնեն ա-
ռանց բռնուէ, այն կը սիրեն,
կը գրկեն, կը սպազնեն, այլ ոչ
չլստի կերպով մը և խենդ
խենդ խօսքերով, թէ ընտո՞ր
աղւոր ես . . . հրեշտակ կը նը-
մանիս . . . անուշ աչուկներդ
կարմրուկ երեսներդ պառ-
նեմ . . . ոսկեթել մաղերդ սի-

րեմ, և այլն և ասոնց նման
 թեթեւօրիկ խօսքեր ընե-
 լով . . . : Այլ ընդհակառա-
 կըն՝ առաքինական և բարոյա-
 կան խօսքերով ականջը կը լե-
 ցընեն, թէ . . . ընտո՞ր հնա-
 զանդ զաւակ ես . . . ընտո՞ր
 հանդարտ խելօքիկ ես . . . մեծ
 մօրդ բարեպաշտու թեանը ե-
 լեր ես . . . աղա նախահօրդ
 ազնիւ հողին ունիս . . . և այլն :
 Տղին դիմացը հայր մայր ցած
 ձայնով կը խօսին, միշտ մէկըդ
 մէկ կը մեծարեն, մէկմէկու
 պակաս թիւն ամենեւին երե-
 սի չեն տար . տղին ամեն ու-
 զածը չեն ըներ, կամքը կը
 կոտորեն՝ անոր խելքը ուրիշ
 բանի վրայ դարձնելով, կոշտ

ու կուպիտ խօսքերով ջեն ջե-
 խեր . և որ շար ևս է , ալապի-
 ճի-իը՝ խօնճօլօղը՝ օճախ սի-իի-րի-
 ճին կուգայ կոր ըսելով ջեն
 վախցներ . այլ միշտ ուրախ
 ձայնով և խնդուն երեսով կը
 խօսին և կը խրատեն , և ոչ
 երբէք անհամբերու թեամբ և
 սիրանեղութիւնով : Ար կար-
 ծուի՞ թէ տղան ատ չի հասկը-
 նար . շատ աղէկ կը հասկնայ ,
 ինչպէս անբան կենդանիք՝ ա-
 նուշ կակուղ ձայնը՝ խոշոր ու
 կուպիտ ձայնէն կը որոշեն . և
 այսպէս տղան քանի որ մեծ-
 նայ , իր համարմունքը և յար-
 գու թիւնը ճնողացը վրայ հե-
 տը կը մեծնայ , որ բնաւ երես
 չէլեր և ճեծի սլատժի ալ կա-

բառու թի չի ունենար : Այս
 պէս շէնք շնորհք մեծցած է
 ին աս տղաքը , որ իրենց ծնո
 ղացը կանոններուն , խրատներ
 բուն և կարգաւորութեանցը՝
 սրտանց և հաճութեամբ կը
 լսէին : Արովհետեւ հոս մեր
 դիտաւորութիւնն է աղջկանց
 կրթութեանը վրայ գրել և ա
 նանց բնաւորութիւնը , և սրբ
 անից ծաւքը ճանչնալ , և իրենց
 յատուկ կիրքը և մտլութիւնը ,
 առաքինութիւնը և կրթութ
 թիւնը յայտնի ցուցնել , որ
 գէշն հեռանան , և աղէկին
 հետեւին ու յորդորուին , մէկ
 խրատական պատմութիւն մը
 հոս բերենք , ուր իբր հայլի
 մը մէջ՝ կարգացող աղջկունք

զերենիք տեսնեն ու շիտկեն : Ա-
 զաւ որ օր մը աս պարոն Աւ-
 րիլիին աղջիկները բան բա-
 նելու սենեակը մէկտեղ եկեր
 էին , և աիկինը՝ քիչ մը ուշ մը-
 նալէն ետեւ՝ երբ որ գրանը
 մօտեցաւ , լսեց որ ասոնք ներ-
 սը՝ կ'առնեն կուտան , մէկմէ-
 կու հետ կը խօսին և կը վե-
 ճին : Այլ կ'ըսէր , թէ ես
 ամենուդ գէմ կը զրուցեմ և
 կը հաստատեմ , թէ մեզի պէս
 աղջկան մը պարտք և զարդա-
 բանքը՝ գիտուն և իմաստուն
 ըլլալ և շատ բան գիտնալ է :
 Ինչո՞ւ համար հայրերնիս մե-
 զի աս վարժատունը շինեց ,
 և մեզի այսքան նորանոր գի-
 տութիւններ կը սորվեցնէ ,

որպէս զի երեւնանք և ցուցը-
 նենք խրախճաններու մէջ
 մարդոց աչքին, թէ կնիկ
 մարդիկ ալ իրենց չափ գի-
 տուն կրնան ըլլալ, և թե-
 րեւս զիրենք ետեւ թողու-
 աս է իմ կարծիքս, և կը տես-
 նամ որ դուք ուրիշ խելքի
 վրայ կը քալէք: Անկալը կ'ը-
 սէր, իմ սիրելի բուրս, ես աս
 ըսածներուդ չեմ հաւնիր և
 հաճիր, և կ'ըսեմ, որ մեզի ա-
 մենէն առաջ՝ բաւական կար-
 դալ գրել սորվիլ և քանի մը
 գիտութեց տեղեկութի ու-
 նենալ պէտք է: Չէ թէ փիլի-
 սոփայ ըլլանք, այլ համեստ
 ու ամչկոտ աղջիկներ, զարդա-
 րենք հոգինիս և սիրտերնիս

առաքինու թեամբք, և մատ-
 վընիս մատնոցով և ասեղով,
 և ոչ թէ գրչով. վերջապէս
 տանտիկին մը ըլլալու յատկու-
 թիւնները ընտոր որ պէտք է
 նէ սորվինք: Օճանոնք աղէկ
 մը սորվելու հազիւ թէ բաւա-
 կան ատեն ունինք, ուր մը-
 նաց քու իմաստու թիւններդ՝
 որ ծայր ճոթ չունին: Ար-
 րորդ մըն ալ ելաւ կ'ըսէր,
 դուք ինչ որ կ'ուզէք, ըսէք,
 ես ասոնց վրայ կը խնդամ:
 Արբոր մէկ աղջիկ մը աղւոր
 է, և ղինքը աղւորցընելու
 ճամբան գիտէ, վայելուչ խօ-
 սիլ մը, ժամանակիս համեմատ
 հագուել կապուել, և խրախ-
 ճանի մէջ զուարճալի դիպ-

ու ածներ և պատ հու թիւն
 ներ պատմել, հարեւանցի
 կարդալ գրել մը գիտնալէն
 ետև, աղէկ շնորհալ չալել, եր-
 գել և խաղալ, ասոնցմէ աւե-
 լին՝ մեղի պէս աղջկանց գլուխը
 կը ցաւցընէ, և բան մըն
 ալ չարժեր: Նորէն կը պըն-
 դեմ, թէ աղուոր, դուար-
 թերես և վարդերես ըլլալ, և
 շնորհքով ամեն շարժմունքը,
 քալուածքը և խօսիլը յարմար-
 ցընել, ահա մեր արժէքը և
 արդիւնքը: Տիկիներ ալ աւե-
 լի չի սպասեց, դուռը բացաւ
 ներս մտաւ, ի՞նչ բանի վրայ է,
 աղջիկներս, խօսակցու ինիդ և
 վէճերնիդ ըսաւ: Այն երբորդ
 խօսողը առաջ ընկաւ և պա-

տասխանեց . թէ՛ հրամանքդ
 ալ լսեցիր և գիտես , որ մեր
 դրացիին աղջիկը Փօլին ա-
 նունով պիտի կարգուի . մէկ
 շատ օժիտ մը (ճէհէզ) չու-
 նի , և ոչ ալ շատ ուսմունք և
 գիտութի , ընտոր որ ամենքը
 կը զուրցեն . աղուորութիւնն
 ալ սանկ բան մը , ուստի ի՞նչ
 պէս կ'ըլլայ , և ի՞նչ յատկու-
 թեան համար աս բազդին
 հանդիպեցաւ , որ շատ հա-
 բուստ մարդու մը հարս կ'ըլ-
 լայ : Ահա ասոր վրայ խորհըր-
 դած ու թիւններ կ'ընէինք կոր ,
 ամեն մէկս մէյմէկ բան ըսե-
 լով : Տիկինն ան ատեն ըսաւ .
 հիմակ ես քեզի չեմ հարցներ
 թէ դուն ի՞նչ ըսիր , և քրվը-

տանքդ ի՞նչ կը մտամտան, ու
 բովհե տեւ ես դրան ետեւէն
 ամեն զուրցածներդ լսեցի :
 Հիմայ ես ձեզի իրաւ պատ-
 մու թի մը պատմեմ, որ շատ
 ջըներ կատարուեցաւ պարուն
 Տիւ վալին ընտանեացը մէջ, որ
 իմ հօրս մեծ բարեկամն է, և
 ես ալ զինքը աղէկ ճանչցայ :
 Կը յուսամ, որ աս ձեզի սոր-
 վեցնէ թէ ի՞նչ է աղջկան մը
 վայլածը և պարտքը, և ի՞նչ
 վարք պէտք է որ սորվիք և ու-
 նենաք՝ որ գովու թիւն լսելու
 արժանի ըլլաք՝ էրիկ մարդոց-
 մէ կնիկ մարդոցմէ՝ աշխրբիս
 երեսը, և աս բանիս վրայ ալ
 նորանց խօսք ջընէք : Հոն վեց
 աղջկուներ մեծ ու պզտիկ չորս-

դին առին և սկսաւ տիկինը
խօսիլ այսպէս :

Պ. Տիւվալ հարուստ ահե-
նավաճառը (ճէվահիրճի) որ-
բեւարի մնաց՝ երեք մեծցած
աղջիկներովը , Սոփի , Ալլայէ
և Շաւլօղ : Ինքը առուտու-
րին ետեւէն ըլլալով , և կին
չունենալով , որ զաւկները կա-
ռավարէ , պատշաճ տեսաւ և
բռնեց մէկ բարի այրի կին մը ,
որ աչք ունենայ աղջկանցը վը-
րայ , ինչուան որ զանոնք տուն
տեղ ընէ : Այս այրին , որ կ'ըս-
ուէր Վատամ Պօնթան , իրաւ-
ցընէ կը սիրէր զասոնք սըր-
տանց , մօր մը պէս , բայց
թոյլ բնութիւն ունենալով ,
չկրէր խրատել , զսպել և շրտ-

կել ասոնց սրտին մէջ ճշած
 կերպ կերպ պակասութեանց
 կիրքերը, այնպէս որ այս ե-
 րեք աղջիկները երես ելան և
 իր ու հօրերնուն վրայ տիրու-
 թիւն կը բանեցնէին և տանը
 մէջ բացարձակ կամքերնին կը
 քալեցնէին: Հացի տտե՛ն որը
 կուգար սեղան, որը իր սե՛ն,
 եակը կուտէր հացը, երբ ու-
 ղէին՝ ժուռ գալու կ'երթա-
 յին: Իրենց ուղածին պէս բա-
 րեկամուհիները շատցուցին,
 և ասոնց նման բաներ, որ
 թէպէտ և անսեղ՝ բաց լեր
 ու վար էր տունը և անկար-
 գուէ մէջ: Մատառ Պօնթան
 բոլորովին անոնց հրամանին
 ներքեւն էր, և անոնց ջուրին

կ'երթար, ըրածնեքնուն բնա-
 լին գէմ չէր 'ի դար: Պ. Տիւ-
 վալ աս ամեն անկարգութի-
 ները կը տեսնէր զաւկտոցը վը-
 րայ, բայց ընտո՞ր ընէ, ասեն
 չունի հողալու, կը տրտմէր, կը
 ցաւէր և ինչ ընէ լիքը չկտէր:
 Անք հոս աս երեք աղջիկը մէկ
 կարգ դրինք, և մէկ խօսքով
 յանդիմանեցինք, բայց գիտ-
 նալու էք, որ մէջերնին մէկը
 համեստ և առաքինի էր, որ
 իր վիճակին վայլած գովելի
 ճամբէն դուրս չէր ելներ, ու-
 բուն կ'ուզէմ, որ դուք ալ
 ջանք ընէք նմանելու, թէ որ
 կ'ուզէք աշխարհիս վրայ եր-
 ջանիկ ըլլալ: Բայց աղէկ հաս-
 կրնալու համար աս երեք աղ-

Զիկնեբունն գլխունն եկածը ,
 պէտք է , որ ես հոս բացատրեմ
 ձեզի , ամեն մէկունն բընու
 թիւնը և սովորութիւնը դատ
 դատ : Սոփին առ ջինեկը՝ մեծ
 ահասակ էր և ամեն անգամօքը
 համեմատ , դէմքը անձիծաղ
 և խիստ , և քիչ մը սեւի վրայ
 կը զարնէր : Աս էր ամենունն
 մէջ գիտունը : Սորվեցաւ լատինե
 վար , անգղիերէն , յունարէն լեզու
 ները և ջանք կ'ընէր կրթուելու
 ան ամենուամանց մէջ , որ մանչ
 պատանիները կը սորվին՝ տէրութեան
 ծառայութիւնն ընելու ծովու և
 ցամաքի վրայ : Վիշեր ցորեկ
 թուաբանութեան , գրահաշուի (ալճէսկ

րա) և եռանկիւն աչափու թե
 հաշիւներուն վրայ կը մաշէր =
 Նր սենեակը՝ ակադեմիայի գի-
 տունի մը սենեակը կը նմա-
 նէր: Վիրք, երկրագունտ,
 երկնագունտ և ամեն բնա-
 քանական գործիքներ լեցուն
 էր: Նր քրվրտանքը, ազգա-
 կանները և մինչեւ իր հայրը
 սոգէտի տեղ կը դնէր, միշտ
 բերանը ուսումնական և բա-
 րոյական կտրուկ առածներ և
 հին պատմութիւններ էին, և
 կ'ուզէր որ ամենքը ամի 'ի բե-
 րան ղինքը մտիկ ընեն, և իր
 մէկ խօսքը երկուք ջընեն: Այս-
 պէս ինքնահաւան և հպար-
 տասիրտ, կ'ըսէր թէ ո՛վ կըր-
 նայ իրեն հետը խօսիլ և ըստ

ծը հասկնալ : Միշտ իր թե-
 ւին տակը քանի մը հատոր
 գիրքեր կը կրէր՝ երբ հացի
 իջնար և վարը հօրը խանու-
 թը երթար : Ասկէց կ'իմանաք,
 որ ինչ աստիճան տէրութիւն
 և հրամայողութիւն կը բա-
 նեցնէր տանը մէջ ծառայից և
 մանաւանդ ան թուրասիրտ
 Մատամ Պօնթանին վրայ :

Ակլայէ՛ երկրորդ աղջիկը,
 որ ըստ հին հռոմայեցւոց դիւ-
 ցազանց պատմութեան, կուս-
 այսինքն շնորհք կամ շնորհա-
 ւորք ըսուած երեք աղուոր
 քրվրտոց մէկին անունն էր,
 իրաւցնէ անոր կենդանի պատ-
 կերն էր. հասակաւ չափաւոր,
 մարմնով լեցուն, ասկէթեւ

դեղնի վրայ մաղերով, ճեր-
 մակ երես, աչքերը աշխոյժ,
 բիթը բերանը կոկիկ պղտիկ
 և ամեն անդամները համե-
 մատ: Այս ալ բոլոր օրը հայ-
 լինն դիմացը կ'անցնէր՝ մա-
 ղերը սանտրելու, գլխին կա-
 սոցը յարմարցնելու, սաղ-
 լելու, զարդարուելու և քալ-
 ւածքը կոտրուածքը չափ-
 ջրվելու կը զբաղէր, որպէս
 զի ամեն տեսնողներուն աչքը
 իր վրայ դարձնէ և ըսէ՝ թէ
 կայ մի իզմէն աղուոր աղջիկ
 Փարիզու մէջ: Այսպէս ինք-
 նիրեն հաւնած և սիրամարդ
 հաւուն պէս հպարտ ապրե-
 լով, բնականաբար ետ մնաց
 ամեն կրթութիւն և ուսմուն-

քէ , և քիթ բերան ընելով
 կ'արհամարհէր՝ իրեն Սոփի
 քրոջը ուսու մնականու իր : Մա-
 տամ Պոնթան , աս տկարամիա
 կնիկը , որ պէտք էր զանի խը-
 րատէր , թէ աս վարքը գէշ
 վերջ մը կ'ունենայ , բնաւ ին-
 հոգ չընելէն զատ , զանիկա ա-
 մենէն եւել կը սիրէր , և որ-
 պէս թէ կը պաշտէր : Հիմա
 գանք երրորդ աղջկանը , Շառ-
 լոդին , որուն բնաւ որու թիւ-
 նը , վարքը և բռնած ճամբան
 բոլորովին տարբեր էին իրեն
 քրվատոցմէն , և կ'ուզեմ , որ
 աղէկ մտիկ ընէք , աղջիկներս ,
 որ իրեն նմանիք : Աս ալ հա-
 մեմատ և բաւական աղուոր
 երեսով և մեծղի մարմնով

աղջիկ մըն էր : Համեստ ,
 հանդարտ , քիչ խօսող և հը-
 մուկ , ամեն ուսմանցը որ
 վարպետները տունը գալով
 քրվրտոցը և իրեն գաս կու-
 տային , ջանքով կը հետեւէր
 և կը սորվէր , սպասող ատեն
 չէր անցուներ , և շատ զբօ-
 սանքներէ և ժուռ գալէ կը
 հրաժարէր , միշտ քաշուած
 իր սենեակը՝ ասղնեգործու-
 թիւն ընելէն և կար կարելէն
 գլուխ չէր վերցներ , և աս
 ձեռագործները կը պահէր ,
 անոր ասոր չէր ցուցներ և ոչ
 իր հօրը , բանի մը տեղ դնե-
 լով և սլարծենալով , ընտար
 քրվրտանքը կ'ընէին : Աս իր
 բռնած ճամբուն նայելով , կը

կարծուէր՝ թէ տանը մէջ չէ,
 և բանի մը վրայ բնաւ հող
 չունի: Հայրը Պ. Տիւվալ
 անանկ միտքը դրաւ թէ աս
 սլաղ հողի աղջիկ մըն է: Ան-
 կալները թէպէտ սանկ նանկ,
 բայց խրախճաններու մէջ բան
 մը ըլլալինն կը ցուցնեն, իսկ
 ասիկա մէկ աղուոր արձան մը,
 ոչ խէր ունի և ոչ ղէն: Եւ
 Աստամ Պօնթանը, որ ուրիշ
 ներուէն վրայ բերան չէր կրնար
 բանալ, ասոր վրայ կ'իյնար
 շատ անգամ, ծոյլ և հեղգ ը-
 սելով կը յանդիմանէր, կը շե-
 խէր և բնաւ չէր սիրէր: Այս-
 պէս ըլլալով բանը՝ կարծէր,
 թէ սուգի քօղով մը՝ իր բա-
 ըի բնաւորու թիւնը և վարքը

Տամ կու եցաւ դրսուանց : Տայց
 ինքը խելացի , գիրքերով խը-
 րատուած՝ գիտէր իր ըրածը ,
 և առանց տրտմելու ճշգոհա-
 լու ընդդէմ հօրը , քրվրտոցը
 և Մատամ Պօնթանին , կը շա-
 րունակէր իր ընթացքը :

Ահա իմացաք սս երեք քրք-
 վրտոց մէկ մէկէ տարբեր վար-
 քը և չիտեմ թէ ձեր սրտին
 ո՞րը վայելուչ և ո՞րը անվայե-
 լուչ երեւցաւ . բայց հետե-
 տալ պատմելիքէս պիտի ճանչ-
 նաք յայտնի և որոշակի աղէ-
 կըն ու գէշը :

Ասոնք եկան հասան ան
 տարիքը՝ որ երեքն ալ հարսըն-
 ցու աղջիկներ եղան : Պ. Տիւ-
 վալ շատոնցվընէ հետէ՝ մըտ-

քին մէջ գիտաւ որու թիւն մը
 ունէր : Աւագէր , որ իրեն մէկ
 մեծ բարերարու թիւն մը ը-
 նող եղբոր պէս բարեկամին
 տղան , որ ամեն կրթութեամբ
 կատարեալ և չափաւոր հա-
 րուստ մըն էր , իրեն փեսայ
 ընէ : Տայց աղէկ գիտէր , որ
 աս միտքը աղջկանցը յայտնե-
 լու որ ըլլայ , անոնց ինքնահա-
 լանութեն յայելով , որ քանի
 մը հեղ փորձով ալ տեսեր էր ,
 ասոնք չի հաւնին պիտի և ի-
 րենց արժանի պիտի չի սեպեն
 ու մերժեն : Թէ որ զիրենք
 համոզէ և ստիպէ իբր բռնա-
 դատելով , ընտոր որ կ'ընեն
 անխոհեմ ճնողքները , ան ալ
 գէշ վախճան կ'ունենայ : Աւր

մնաց որ ան կտրիճը իր կողմանէ պէտք է որ սրտին սիրածը ճանչնայ և հաւնի : Այդին դարձաւ անդին դարձաւ և հասկցաւ որ աս կարգով կանոնով լրմնալիք բան չէ : Աւտի հնարք (Ֆէնտ) մը ձեռք առաւ սովորականէ դուրս, որ ամեն մէկը իր ազատութեամբը և կամքովը շարժելով ինքն ալ իր վախճանին հասնի :

() ին մէկը առտուանց կանուխ Պ. Տիւվալ իր սենեակը նստած, ուրախ ցնծուն երեսով մը ըսաւ Մատամ Պօնթանին « Իմացուր ազջկանցս, որ երեքն ալ հաս բովս գան և դուն գնա՛ քու գործիդ ետե-

ւէն եղիւր : 7) Աստուծոյ երբոր աս
 հրաւերը լսեցին , շատ զար-
 մացան թէ ինչ պիտի ըլլայ :
 Արբոր սենեակը հօրերնուն
 քով մտան և դուռը կը պեցին ,
 Սոփին առաջ ինկաւ և դրժ-
 ուարե լով մը ըսաւ . — Ի՞նչ
 պիտի ըլլայ , հայր , աստուծոյ ար-
 տորնօք և կանուխ կանչելդ ,
 բոլոր գիշերը կը մտմտայի մէկ
 գրահաշուի (ալճէսլրա) խըն-
 դիւր մը քակելու և հիմակ
 նստեր ան կը գծէի և կը գրէի
 կոր , ասա միտքս շփոթե-
 ցաւ և բանս ետ մնաց : 7) Այ-
 լայէն ալ անգիտէն ըսաւ . — Ես
 ալ մէկ նորե լուք աղուոր հա-
 դուստ մը կարելու վրայ էի ,
 որ վաղը հագնիմ , հիմա կիտ-

Կատար մնաց : Դ Շ առ լօղն ալ
 ըսաւ հեղուկ ձայնով մը . — Ես
 քու հրամանիդ հնազանդելէն
 աւելի հարկաւոր բան մը չու-
 նիմ : Դ Պ . Տիւ վայ ըսաւ . — Շատ
 կը ցաւիմ , որ ձեր հաճոյա-
 կան դորձքերէն ձեզ արգիլե-
 ցի , ընտո՞ր ընեմ , վասն զի ձե-
 զի տալու լուրս ատոնցմէ շատ
 աւելի հարկաւոր սեպեցի :
 Հիմա ինձի մտիկ ըրէ՞ք : Դ ու ք
 երեքնիդ ալ շէնքով շնորհքով ,
 ողջ առ ողջ , առանց մէկ տկա-
 րու թեան մեծցաք , փառք աս-
 տուծոյ : Հիմա իմին պարտքս
 է և կը մտմտամ , որ ձեզ տուն
 տեղ ընեմ և կարգեմ : Դ — Ահ ,
 չեմ դիմանար ըսելու տեղն է ,
 հայր , աս քու մտմտութիդ

վրայ, ըսաւ Սափին. հարցու
 ցիր մի մէյմը ինձի թէ կու
 զե՞մ, կամ թէ ի՞նչ գոյն է
 ըիկ . . . Ես չեմ կրնար սիրաս
 տալ մէկու մը, մինչեւ որ ի
 մաստուն մը, փիլիսոփայ մը
 չլլայ և ասոր ալ ատեններ
 պէտք է: » Այլայէն ալ անդ իէն
 ըսաւ. — կարծեմ, որ ինձի հա
 մար շատ դժուարութիւն պի
 տի չի քաջես, հայր, մէկ մը
 գտնալու, վասն զի ես իմաս
 տուն չեմ փնտռեր, այլ շատ
 հարուստ մէկը: » Հաւրդն ալ
 հառաչելով մը ըսաւ. — Ես
 չեի կարծեր որ հայրս այսպէս
 շուտով ուզէ մեզ գլխէն թե
 թեւցնել: » Հայրը պատաս
 խանեց — Երբ որ լսէք մէյմը

իմ ըսելիքս , կ'իմանաք , որ ոչ
 զձեզ կ'ուզեմ գլխէս նետել
 և ոչ տարակուսանաց մէջ եմ :
 Չեղի պէս աղջկանց արժանի
 էրիկ մարդ մը կը պակսի : Բայց
 հիմակու հիմա չէ թէ ամե-
 նուդ համար է բանը , այլ մի-
 այն մէկ հատիդ վրայ : Այլ գի-
 տէք ի՞նչ է այս , ի՞նչ փառա-
 ւոր վիճակ , որ բոլոր Աւրո-
 պա պիտի թնդայ թէ որ լսե-
 լու ըլլայ . մէկ թագաւորա-
 զուն մը , մէկ մեծ իշխան մը որ
 ձեզմէն մէկերնիդ կ'ուզէ : ”
 Ամենը մէկէն մատ խաճնե-
 լով ըսին . — Բնտո՞ր , թագաւո-
 րազնն մը : — Այո՞ աղջիկ-
 ներս մեծ արքայազուն մը և
 երեւելի իշխան մըն է Աւրո-

պայու մէջ : Ստեր էք մի արդե-
 ւօք մեծապատիւ Տ. Ամս
 Քամիալան : Պոփին առաջ
 վաղեց ըսելով — Ար յիշեմ կար-
 դացած պատմութիւններէս ,
 որ ատիկա հոլանտացի պիտի
 ըլլայ , որ մեծ ծառայու թիւն-
 ներ ըրաւ թողաւորու թեա-
 նը : Պէտքը պատասխա-
 նեց . — կարծեմ , որ ադ ը-
 սածդ պիտոր ըլլայ , բայց ով որ
 ըլլայ , ահա մէկ մեծ բաղդա-
 ւորութիւն մը որ ձեր առաջը
 կը դնեմ : Պէտքէ ժպտելով
 մը ըսաւ . — արդեօք կատակի
 (շախա) համար մեզի կը դը-
 րուցես կոր , հայր , առ բա-
 նը : Պէտքը — չէ , չէ , ըսաւ ,
 մի կարծեր այնպէս , այլ խիստ

Ճշմարիտ է ըսածս, ահա հոս
 մեզի մօտ Նմաթէրտամ անու-
 նով իջեանը (օթէլ) իջեր է,
 երէկ իզմէ սսկեղէն և գոհա-
 րեղէն վաճառներ ուզեր էր՝
 հոն էի. ինչ աղնուական բարք,
 ինչ անուշ ու քաղաքավար զը-
 րուցուածք և ընտելական վար-
 մունք, չեմ կրնար զրուցել.
 հետս երկար խօսակցեցաւ,
 ինծի բացաւ իր սրտին տըրտ-
 մութիւնը. «ձանձրացեր եմ,
 ըսաւ, մեծամեծ խրախճան-
 ներէն, և հոն տեղը երևցող
 գոհարներով և մարդարիտնե-
 րով զարդարուած տիկիներ-
 րուն և աղջկանց վարքէն, և
 այսպէս ալ չոր գլուխ չեմ
 ուզեր ապրիլ: Նայց ուր և

ընտո՞ր գտնամ մէկ սիրտ մը
 իմ բաղձանացս համեմատ ,
 մէկ շէնք շնորհք , համեստ
 վարքով , պէտք եղած կրթու-
 թիւնները ունեցող աղջիկ մը .
 ո՞ր աստիճանէ ըլլայ նէ թող
 ըլլայ , ես որպիսու թիւն կը
 փնտռեմ , որքանու թիւն հո-
 գըս չէ . ես՝ գիտեա որ եւել
 եւելօք ունիմ . . . : Արդեօք
 գու՞ն կը ճանչնաս մի այսպիսի
 շնորհքով աղջիկ մը . . . : Այլ
 որ ինձի այս ծառայութիւնը
 ընելու ըլլայ , ու զիս աս սրբա-
 նեղութենէս աղատէ , իմ ա-
 ռաջին բարեկամս կը սեպեմ ,
 և հօր տեղ գնելով իրեն կը
 ծառայեմ : »

Այս որ լսեցի նէ , համար-

ճակեցայ իրեն ըսելու թէ ,
 — ես երեք աղ ջիկ ունիմ մէյ-
 մէկէ սիրելի և շնորհօք և գը-
 րեթէ ամեն կրթութիւնները
 սորված : » Իշխանին սիրտը
 թունտ ելաւ , և աջմէքը
 զուարթութիւն մը վրաս բա-
 նալով , և ինծի երանի տալով
 լաւաւ . — թէ որ աղ աղ ջիկ-
 ներն իրենց հօրը աղնիւ հո-
 գին ունին և առաքինութեցը
 կը նմանին նէ , ասկէց աւելի
 ի՞նչ կ'ուզեմ , ահա իմ երջան-
 կութիւնս կատարուեցաւ : »
 Չերկնցնեմ , իրեն ետքի խօս-
 քովը զիս պարտաւորեց , որ
 ձեր մէջէն որերնիդ օր իրեն
 պատշաճ կը սեպեմ , զանիկա
 իրեն բնակարանը տանիմ , օր

Ինքն ալ հետը խօսի և ճանչ
 նայ : ” Հայրը խօսքը լըմնցուց
 չի լըմնցուց , Սոփին ըսաւ . — ա
 տիկա կարգէ դուրս բան մըն
 է , հայր . դուն անտարակոյս
 գիտե՞ս , որ ատ մարդը իրաւ
 ցունէ արքայազուն է , չըլ
 լայ թէ մէկ նենգաւոր խա
 բերբայ մը ըլլայ , որ սուտու
 մուտ ճամբով իր բանը տես
 նել ուզէ , որոնց օրինակները
 շատ գիրքերու մէջ կարդա
 ցեր եմ : Հայրը սլատասխա
 նեց . — աստուած չընէ , որ
 խաբերբայ ըլլայ կոմս Քամբալ
 լանը , որ ճանչցուած է թա
 դաւորին սպառտը , և մեծա
 մեծ սեղանաւորներէն , և ա
 մենէն , իր ընտանիքը յաճա

խորդոս (միւշտէրի) է . հայրը
 շատ աղէկ կը ճանչնամ և շատ
 ապրանք խաւրեր ծախեր եմ : ”
 Այլայէն հարցուց . — Ա՞յ իշխա-
 նը արդեօք ծեր է թէ կորիճ
 մարդ մըն է . — քսան և վեց
 տարեկան է , ըսաւ հայրը ,
 մեծահասակ և վայելուչ դէմ-
 քով երիտասարդ մը : ” Ա՛հ ,
 ըսաւ Այլայէն , ալ ինչ սուելի
 բան պէտք է ինձի համար : ”
 Սոփին անդիէն բռնկելով չե-
 խեց զանիկա ըսելով . — կար-
 ծեցիր , որ արդէն անոր տու-
 նը բարձերու վրայ բազմեր
 նստեր ես : Չի լսեցիր , որ
 հայրերնիս մէջերնուս անիկա
 պիտի ընտրէ , որ իշխանին
 սրտին ուղածն է , չէ թէ քե-

զի պէս կու՛նաիկ կըտրիկ մէկը ,
 որ աղուորու թեանդ վրայ հը-
 պարտացեր , ուրիշ ոչ բարո-
 յական և ոչ գիտնական բա-
 ներու տեղեկու թի չունիս : ”
 Ակլայէն կարմրակելով անոր
 պատասխանեց . — ադ ըսածդ
 սուտ չէ , բայց աս ադ կայ ,
 որ կիսկատար իմաստակի սիրտ
 ու բերան չունիմ , և գուն
 կը կարծես թէ ատիկա մեծ
 պակասութիւն չէ՞ մէկ աղջկան
 մը : ” Հայրը աս նորելուք վե-
 ճը կտրելու համար ըսաւ .
 — չեմ ուզեր տանս մէջ տես-
 նել նախանձ և ընդդիմախո-
 սու թիւն , և ձեր ինքնահա-
 ւանու թիր , որ բնական կիրք
 մըն է ձեզիպէսներուն կ’ու-

զեմ դագրեցնել . ուստի ամեն
 մեկդ զատ զատ իշխանին կը
 տանիմ, ինքը թող ընտրէ ի-
 բեն սրտին սիրածը : » Ամենքն
 ալ մեկէն — ազէկն ալ ազ է »
 ըսին : Ակլայէն քովէն կա-
 մացուկ մը հօրը ըսաւ . — կը
 յուսամ, որ առաջ իզմէն պի-
 տի սկօխս : » Սոսիսն աչքը բա-
 նալով ու բերանը սխմելով պի-
 տի վրան վազէր . բայց հայրը
 մեկէն ըսաւ թէ — ադ չըլ-
 լար, ես պիտի կարգաւ սկը-
 սիմ, առջինէկ քրոջդ հետ ա-
 ռաջ կ'երթանք իշխանին, ե-
 տեւ դուն : Թէ որ պէտք ըլ-
 լայ՝ քե՛նէ ետեւ ալ Շառլօղը :
 Աւստի, Սոսիս, գիտնաս որքե՛ղ
 առաջ պիտի տանիմ : Ապր

Ժամը իննիսն պատրաստ եղիր
ընտոր որ պէտք է նէ : »

Հայրը ասոնք զրուցելէն
ետեւ , ելաւ գնաց իր բանը :
Երեք քրվտանք երբոր մինակ
մնացին , սկսան խորհրդակցիլ
աս դիպուածին վրայ , և ա-
տեն ատեն տարցած՝ եւ ել
պակաս խօսքեր կը նետէին
մէկմէկու և մանաւանդ Հառ-
լօղին վրայ հեգնելով , թէ ան-
կիւնը մտցուած աղջիկ մը՝
տհա թագաւորազունի մը
առջեւ պիտի ելլէ և անոր
հարս ըլլայ :

Վատամ Պօնթանը , որ հե-
տաքրքրու թէն կ'երէր , ա-
սոնց շնչիւնը լսելով , ներս
մտաւ : Ասոնք շուտ մը վրան

վազեցին և մէկմէկու խօսքը
 իրարու բերնէ կտրելով՝ իմա-
 ցուցին բանը . ան ալ ուրա-
 խանալով, աչքը անկեց Նկլա-
 յէին վրայ, և սրտանց կ'ու-
 ղէր, որ երջանկու թեան վի-
 ճակը անոր իյնայ :

Իսկ Պ. Տիւ վալ, որ խօսքը
 մէկ ըսեր էր իր սիրած կտրի-
 ճին հետ, վարձեց շուտով
 մէկ իջեւանի (օթէլ) մը մէջ
 մեծամեծ զարդարուած սեն-
 եակներ, ծառաներ, ձիեր,
 կառքեր քանի մը օրուան հա-
 մար : Նսդին Սոփին բոլոր օ-
 րը պատրաստու թեան ետեւէ
 եղաւ, չէ թէ այնչափ հագ-
 ուելու կապուելու, այլ ա-
 ւելի իր արուեստական և

գիտնական գործիքները և աշ-
 խարհացոյց պատկերքները շա-
 րեց, շտկեց, մաքրեց, որ հե-
 տը պիտի առնէր. իր գլխա-
 ւոր հոգն էր ցուցնել իշխա-
 նին՝ չէ թէ ներսի բնաւորու-
 թիւնը և դրսի յատկու թիւն-
 ները, այլ իր շատգիտու թիւ-
 նը, և խելքը պլպլցնել ա-
 նոր առջին, որպէս թէ ի-
 րեն ոտքը եկող աղջիկ մը չի
 կայ բոլոր Աւրոպայու մէջ:
 (Ասիկա թերեւս կը վայլէ մէկ
 ուսումնական պատանեկի մը
 ըստ տեղւոյն և ըստ ժամա-
 նակին, այլ մէկ աղջկան մը՝
 այս պարագային մէջ՝ կրնանք
 ըսել թէ անվայելուչ է. մի
 թէ ազատեմին քննու թիւն

անցունելուն կ'երթայ կոր) =
 Ինչ որ է նե, ատենը եկաւ
 ժամը ինը զարկաւ, ահա փա-
 ռաւոր կառք մը՝ որուն ետե-
 ւը առջեւը ոսկեզարդ հա-
 դուստներով ծառաներ նրա-
 տած էին, եկաւ կեցաւ իրենց
 դրան առջեւը = Արեք քրիտոց
 սրտին մէջ իրաւցունէ զանա-
 զան խռովութիւններ արթըն-
 ցան :

Պ. Տիւփալ Սովիին ձեռքէն
 բռնեց և ծառաներուն հրամ-
 մեց, որ բերեն երկրագունտ,
 երկնագունտ, գիրքեր, ձեռա-
 գիրներ, նկարած պատկերքներ
 և այլն, որոց ամենը կառքին
 մէջ տեղաւորելէն ետեւ, ի-
 րենք ալ մտան և ձիերը կրակ

ցաթկեցնելով վազեցին հա-
 ասն մէկ մեծ պալատի մը առ-
 ջել : Հոն վար իջան և հագ-
 ուած ծառաները ան գիտնա-
 կան գործիքները ձեռու ընին
 առած ետեւէն գալով, մը-
 տան մէկ զարդարուած մեծ
 սրահ մը : Իշխանը երեւցաւ,
 զիրենք մեծ յարգութեամբ
 ընդունեց, բարեւեց և ի-
 րենց առողջութեան վիճակը
 հարցնելէն ետեւ՝ Մովսիսն գո-
 վութիւն տուաւ և հարեւ-
 անցի խօսակցութիւն մը ը-
 րաւ անոր հետ : Իսկ անիկա
 իրեն խելքը ցուցնելու հա-
 մար՝ երկան բարակ պատմու-
 թիւններու և ծանօթութի-
 ներու դարձուց բանը : Իբ

աշխարհացոյցները հանեց ,
 ցուցուց Եւրոպան , Հողան-
 տան , Ամերիկան , ինչուան Չի-
 նաստան՝ ըսելով թէ ասոնց
 ամենուն սլատմութիւնները
 գիտէ և սկսաւ ալ սլատմել ,
 որուն ծայրը ճութը չէր իդար ,
 մէկ գիտութիւն մէկալը ցաթ-
 կելով : Աշխանը իրաւցնէ զար-
 մացաւ , բայց և ձանձրացաւ :
 Եւ յետքանի մը գովասանական
 խօսքեր ընելու Սոփիին , Պ .
 Տիւ վալը հրաւիրեց , որ իր
 ներքին սենեակը հրամմէ : Ան
 միջոցին Սոփիին մինակ մնաց և
 միտքը փուշի վրայ կ'երթար կու-
 գար , թէ արդեօք ի՞նչ կ'ըսէ
 կոր հօրս , բայց սիրտը կ'ասլա-
 հովցնէր ինքնիրեն ըսելով « Թէ

իշխանը աչու ըները վրաս տըն-
կած արմննալով կը նայէր շատ
գիտու թեանս համար . . . տա-
րակոյս չունիմ, որ սիրտը վաս-
տըկեցայ . . . :” Պ. Տիւվալ
դուրս ելաւ, աղջկանը թեւը
մտաւ, իջան վար և նոյն կա-
ռօք տուն դարձան :

Մտմտացէք մէյմը՝ թէ ի՞նչ
հարցմունքներ, ի՞նչ փնտրու-
տութներ չեղան քու ըտոցը
կողմանէ : Մովին կը գոյլէր կը
սլատմէր իշխանին աղնուական
կերպը և խելացի հարցմունք-
ները, բայց ինքն ալ կ'ուզէր
իմանալ հօրմէն թէ բանը ո՞ւր
կը թնեցաւ : Իսկ անիկա աղջը-
կանը սիրտը չի կոտրելու հա-
մար կ'ըսէր թէ — խելքս այն-

պէս կը կտրէ , որ Սոփիին վը-
 րայ պիտի իյնայ վիճակը , բայց
 իշխանը իր ընտրութիւնը լաւ
 եւս ընելու համար կ'ուզէ ,
 որ մէկաշներն ալ տեսնէ , ուս-
 տի Ակլայէ , աղջիկս , վաղը
 դուն պատրաստ եղիր որ ի-
 րեն երթանք : ” Սոփին շատ
 առնուեցաւ , որ իշխանը մէկէն
 'ի մէկ չէ կտրէր իր վրայ հաւ-
 նիլը , բայց որովհետեւ ինք
 իր գիտութեանցը վրայ որչափ
 մեծ համարմունք ունէր նէ
 այնչափ իր աս քրոջը չէր հաւ-
 ներ , ուստի չէր վախնար , որ
 անոր երթալը կարող ըլլայ իշ-
 խանին սիրտը փոխելու :

Ակլայէ կը թռչտէր ուրա-
 խութենէն , և աշխարհք ի

րեն եղաւ երբոր լսեց, թէ
 իշխանը զինքը տեսնել կ'ուզէ :
 Ինքը Սոփիին ըրած պատրաստ
 տու թիւններուն պէտք չու
 նէր, իր պատրաստու թիւննե
 րը նորելուք գլխու զարդեր,
 ժապաւէններ (քօւտէլա)
 հագուստներ, նոր նոր զար
 դարանքներ էին, որոնց հա
 մար բոլոր օրը և գիշերը ան
 տեղի նորաձեւու թեանց (մօ
 տա) խանու թները վեր ու վար
 ըրաւ : Աւելորդ է ըսել, թէ
 Սատամ Պօնթանը ինչ հոգ և
 հնարքներ 'ի գործ դրաւ զա
 նիկա ազուորացնելու : Աերջա
 պէս ժամը իննին Ակլայէն ե
 րեւցաւ հագուած կապուած
 ամեն կերպ պջրանքով Սու

զայի մը պէս, որն որ հայրը
 տեսնելով զարմացաւ, և մըտ-
 քէն կ'ըսէր, թէ աս տարփա-
 ծուն կարծեմ մոլորեցնէ երի-
 տասարդին սիրտը . . . տես-
 նե՛նք: Ստան առջի օրուան
 պէս իշխանին կառքը, հասան
 տունը, մտան սրահը, ուր իշ-
 խանը տեսնելուն պէս աս աղ-
 ջիկը՝ զարնուեցաւ և քաղա-
 քավարութեամբ անոր մօտե-
 նալով՝ անուշ գովասանքներ
 տուաւ և հաճութիւն ցու-
 ցուց, ինչպէս որ սովորութի-
 է սիրահարելոց: Այլայէն ալ
 ինքնահաճութեամբ լեցուած
 սկսաւ լեզուին տալ նորերուք
 հազուստներու վրայ, խրախ-
 ճաններուն, թէատրոններուն,

խաղերուն և սիրած անուշե-
 դէններուն վրայ . . . ետքը որ-
 պէս թէ Փարիզու բարակ և
 գաղտնի ընթացքները բոլոր
 գիտէ, քանի մը երեւելի հա-
 բուստ տիկնայք և աղջկունք
 յիշեց ըսելով, թէ հագած-
 նին սուղ և մեծագին են,
 բայց չիտեն վայելչաբար սաղ-
 ուիլ, և ոմանք ալ սանկ ու
 նանկ՝ կ'ուզեն զիրենք մեծ
 քան մը ցուցնել, որոնք մենք
 երեսնուն կը մեծարենք ու
 ետեւնուն կը ծիծաղինք եւ-
 այն = Իշխանը, որ առաջ Ակ-
 լայէի վրայ զմայլեր էր, աս
 խօսակցութիւնը ըսելով զար-
 մացաւ ու մտքէն ըսաւ. « որ-
 պիտի անպիտան և չար ծանօ-

Թու թիւններով աս աղջկանը
 սիրտը և խելքը լցուած է ,
 մեզք որ իր յարգը չիյտէ և
 հրաժարական բարեւ տալով
 իրեն , հօրը հետը մտաւ մե-
 կալ սենեակը խօսելու : Այլա-
 յէն ինքնիրեն հուսնած և բռ-
 լորովին ապահով , երբոր հօրը
 հետ կառքը մտաւ , իրեն բ-
 սաւ . և հէ , հայր , ի՞նչ կ'ը-
 սես , դարձուցի՞ մի սրվոր գը-
 լուխը : և Հայրը պատասխա-
 նեց . և ո՞վ կը տարակուսի ա-
 տոր վրայ . Սոփին ի՞նչ պիտի
 ըլլայ քու քովդ . վրագ կը մա-
 ըի կոր իշխանը . բայց որովհե-
 տեւ գիտէ , որ երբորդ աղ-
 ջիկ մըն ալ ունիմ , կ'ուզէ կոր
 ան ալ վաղը տեսնել , ու ես

պէտք է որ իմ հայրու թիւնս
 հաւասար ամենուդ վրայ ցու-
 ցընեմ, խեղճը ջըլայ որ սիր-
 տը դնէ և տրտմի, դուն չես
 վախնար հէ: — Ա՛ս մի վախ-
 նամ, մէկ պղտիկ նախանձ մը
 իսկ սրտէս չանցնիր, թող եր-
 թայ Առաքողը, թող տեսնէ,
 խեղճը ոչ շնորհք ունի, ոչ
 տեսք մը և կրթութիւն մը,
 և ոչ ալ այնքան բան հասկը-
 նալ մը . . . ես վստահ եմ, որ
 իշխանը ամեն դին պտըտելէն
 ետեւ վերջապէս ինձի կուգայ
 կ'իյնայ: » Ա՛սանկ ցնձուն սրբ-
 տով Ա՛կլայէ տուն դարձաւ և
 պատմեց եւել եւելօք առ տե-
 սութիւնը, անանկ որ ալ քու-
 ըը Սոփին սկսաւ յուսահա-

տիւ :

Պ. Տիւ վալ իմացուց Շառ-
 լօդին , թէ կարգը հիմա քեզի
 եկաւ , վաղը երթանք իշխա-
 նին քովը , որ քեզ տեսնէ , ինչ
 պէս որ տեսաւ երկու քովը
 տանքդ : Անիկա ցաթկելուն
 ուրախանալուն տեղը հառա-
 ջեց ու լացաւ , և կը բռնա-
 դատէր իր հայրը ըսելով , թէ
 գարձուր աս բանը , որ չեր-
 թամ . թէ որ Վոփիին իմաւ
 տու թիւնը և Ակլայէին աղ-
 ւորու թիւնը իշխանին սիրտը
 չի զարկին , ես որ ադ յատկու-
 թիւնները չունիմ , ընտո՞ր պի-
 տի անոր հաճոյանամ , բոլորո-
 վին անօգուտ է իրեն երեւ-
 նալս , բայց եթէ՝ ես ամօթով

պիտի մնամ, և քրվլատոցս որ
 պիտու թիւնները աւելի պայ-
 ծառ պիտի փայլին ու երեւ-
 նան: Քրվլատանքը սկսան վրայ
 տալ հեգնելով, « մեղայ, ին-
 չո՞ւ գէ՞մ կը կենաս, ի՞նչ կ'ըլ-
 լայ, կտորդ մի կը բրբի, գո-
 նէ սիրուն մարդ մը և փառա-
 ւոր ասպարաններ կը տեսնես: »
 Հառլոգին ճարը հատած՝ ալ
 յանձն առաւ երթալը: Աս
 համեստ և խրպնոտ աղջիկը
 զինքը ցուցնելու համար պատ-
 րաստութիւններ ընելու հո-
 գեր մտմտութներ չունէր, և
 Սատամ Պօնթանը, որ մէկալ
 երկուքին համար գիշերները
 անքուն անցուց՝ զիրենք սա-
 զելու զարդարելու համար,

աս ետքինին վրայ բողոքովին
 անհող իր անկողինին մէջ հան-
 գիտտ քնացաւ : Իսկ Շառլօդ
 հագաւ պարզապէս ճերմակ
 մաքուր շրջազգեստ (Ֆիս-
 տան) մը և գլուխը շտկելէն ե-
 տել , մազերուն մէջ մէկ շին-
 ծու աղուոր վարդ մը դրաւ
 յարմարեց շնորհքով , հօրը
 հետ կառքը մտաւ և գացին
 ներկայացան իշխանին , որն որ
 առջի բերանը ասիկա տեսնե-
 լով՝ սրտէն բան մը չանցաւ ,
 և աչքը վերէն ՚ի վար պրտըտ-
 ցընելով կ'ըսէր ինքնիրեն , թէ
 աս աղջիկը ընտո՞ր իր քրվատու-
 ցը ճամբան չէ բռնէր , Շառ-
 լօդ կարմրեցաւ աչքը վար ա-
 ռաւ : Իշխանը մտքէն ասոր

հաւնեցաւ , ու սիրտը արթըն-
 ցաւ , և սկսաւ քաղաքաւարա-
 կան խօսքեր դրուցել թէ " ո՞ւր
 է բերած ձեռագիրներդ , աշ-
 խարհացոյցներդ և հմտական
 արուեստներդ , տեսնենք , ինչ
 պէս քու քոյրդ բերաւ : "
 Հառլօդ հեղու թեամբ պա-
 տասխանեց . " մեզի պէս աղջ-
 կանց համար՝ աս գիտութեց
 վրայ պարծենալու նշանները
 ի՞նչ օգուտ ունին , մեզի բուն
 պէտք եղածը ան է , որ մեր
 ծնողքը սիրենք և հնազան-
 դինք և երբոր մեզ տուն տեղ
 ընեն , մեր էրկանը հլու և հը-
 պատակ ապրինք : — Դուն
 բաւական կը սեպես , որ ատ
 առաքինութիւնները միայն ու-

նեցողի մը հետ մէկ մարդ մը
 կարգուի, ալ ուրիշ բան
 պէտք չէ՞ մի. — այն պէտք է,
 ըսաւ Շառլօղ, քանի մը բան
 ալ աւելի. այսինքն հոգինիս
 զարդարուած ըլլայ ճշմարիտ
 և բարոյական խրատներով, և
 մեր տարիքին վայլած քանի
 մը օգտակար և զուարճալի
 արուեստներ (մարիֆէթ) սոր-
 ված ըլլանք, ինչպէս կար կա-
 րել, ասոնք որ ծուծիւն (օյա)
 ընել, նկար քաշել և այլն. և ա-
 սոնք պէտք է գիտնանք ա-
 ռանց պարծենկոտութեան և
 որու որ ըլլայ գիտցածնիս ծա-
 խելու զեւով: — Շատ աղէկ,
 շատ ըռինտ, ինչ կրնանք ը-
 սել ատ խօսքերուդ, և դուն

որ այսպէս կը զըռուցես կոր
 համարձակ, (թողու թիւրէ),
 ՚ի հարկէ դուն ատոնցմէ քա-
 նի մը բան սորվեր ես և գի-
 տես . — Այո՛, ըսաւ Շառլօդ
 քաշուելով մը, ատոնք մանր
 բաներ են, կարժէ մի որ ըսեմ,
 ինչպէս երաժշտութիւն (միւ-
 ղիքա) : ” Հայրը մէկէն անոր
 խօսքը կտրեց ըսելով, ” Ի՞նչ,
 երաժշտութիւն մի գիտես,
 ես սկսելդ գիտեմ ընտոր քըր-
 վըտանքդ, այլ սորվելդ բնաւ
 չի լսեցի : ” Իշխանը ըսաւ . ” հի-
 մակ մէկդի թողունք ադ խըն-
 դիրը, ահա հոս է շիմպալօն,
 հրամէ հոն որ մտիկ ընենք : ”
 Շառլօդ համարձակ գնաց
 նստաւ նուագարանին գիմաւ

յը , և թեթեւ մատու ընեքը
 շարժելով նուազեց և հետն
 ալ անու շ ձայնով խաղ մը կան-
 ջեց :

Հայրը ուր ըլլալը ջկտեր
 և իշխանը ղմայլած հարցուց .
 ” Ո՞վ է ջիներ աս երաժշտու-
 թիւնը և ադ խաղին խօսքե-
 րը . ես քիչ մը երաժշտու-
 թե՛նէ կը հասկնամ . զրուցէ՛իր ,
 որ մէկ հատ մը ծախու առ-
 նեմ : ” Հառլօղ պատասխա-
 նեց խպնելով թէ — պար-
 ծե՛նալ ջի սեպուի , աս մեծ
 բան մը ջէ , ես ջիներ եմ բու-
 լորը : ” Իշխանը ” շատ հաւ-
 նեցայ ըսաւ ադ երգիդ , ու-
 նիս մի ուրիշ բան մըն ալ , որ
 մեզի ջնորհք ընես տե՛սնե .

լուր » : Շառլոդ ծոցէն հանեց
 մէկ մանրանկար մը շատ աղւոր
 և բարակ, ուր նկարուած էր
 իր հօրը Պ. Տիւվալին գէմքը
 և մէկ թեւաւոր Վուզա մը
 իրեն յոյժ նման, որ ձեռքը
 անթառամ պսակ մը բռնած
 հօրը գլուխը կը դնէր : Հայրը
 մէկէն ցաթկեց պագաւ զա-
 նիկա ըսելով. » իմ աննման
 աղջիկս, դուն էրբ սորվեցար
 ադ ճարտար արուեստները,
 որ ես նոր կ'իմանամ կոր . . .
 ասոնց համար էր ուրեմն, որ
 դուն քաշուած կ'ապրէիր, և
 հազիւ օրը երկու անգամ կե-
 րակուրին ատենը քեզ քիչ մը
 կը տեսնէի :

Հայր իմ ըսաւ Շառլոդ .

— դուն հայրական պարտքը
 կատարելու համար մեզի վար-
 պեաներ բռներ էիր, մեր
 պարտքն ալ ան էր, որ համար-
 նիս սորվինք, որպէս զի ըրած
 ծախքդ պարապը չերթայ,
 դուն առուտուրիդ և բարե-
 կամներուդ հետ պաշտեալ, կը
 վայէր մի ինձի, որ ժամանակդ
 այսպէս պղտի բաներու վրայ
 անցունել տամ: Բուրերուս
 ըրածը բաւական էր, ես ալ
 ինչ աւելի ձանձրութիւն ըլ-
 լայի հրամանքիդ, ասկից ՚ի
 զատ գիտես, որ քրտանքս իմ
 վրաս, որովհետեւ պղտիկնիս
 եմ, տիրութիւն մը կը բանե-
 ցընեն, ես սորվածներս հը-
 րամանքիդ ցուցնեմ նէ, կարե-

բեյի է որ նախանձնին դրդի ,
 և քու սէրդ իմ վրաս ձգելով ,
 անոնց վրայ քիչ մը պակասի , ա-
 սոր համար լռիկ քաշուած
 սենեակիս մէջ համարս միշտ
 կը սորվէի , որ մեր կրթուած
 մեծնալուն համար քու դիտա-
 ւորութիւնդ կատարեմ : ” Իշ-
 խանը Հառլօդին վայելուչ
 խօսքերը լսելէն ետեւ , անոր
 սրտին փափուկ զգացմունքը
 հասկնալով , Պ. Տիւ վալին պը-
 լուեցաւ ըսելով . — իմ փնտը-
 ռածս գտայ , իմ երջանկու իս-
 եղաւ , . . . թէ որ իմ ճշմա-
 ըրիտ բարեկամս ես , թէ որ ին-
 ծի ալ հայր կ'ուզես ըլլալ , յոր-
 դարէ աղջիկդ , որ իր վիճակը
 իմ վիճակիս հետ կապելու

յանձնառու ըլլայ . . . սա օ-
 րինաւոր խնդիրքս կատարէ ,
 և ես բոլոր կենացս մէջ՝ ե-
 րախտիքդ չի պիտի մոռնամ : ”
 Այսպէս խօսելով իշխանը
 հետերնին ինչուան դուռը ի-
 ջաւ և հոն իրարու խնտուն
 բարեւներով՝ մտան կառքը
 հայրը և աղջիկը : Պ. Տիւփալ
 ուրախութեամբ և զարման-
 քով լցուած , գրկեց պագաւ
 նորանց (առլօգը բսելով . —
 ապրիս , մնաս , աղջիկս , քու-
 կին ճարտարութիւնդ և հա-
 մեատ պատասխաններդ ինձի
 ատոր աշխարհ մը կ'արժէ , դուն
 իս երջանիկ նախանձելի հայր
 մը ըրիր : Այց դու ալ ըսէ ինձի ,
 հիմա քու սիրտդ ալ սիրեց առ

մարդը , ընտոր ինքը քեզ կը սի-
 րէ կար : Հրամանքդ հայր , սր
 աշխարհք կը ճանչնաս , լսէ
 թէ ասիէ ալ աւելի սիրուե՛ն
 մարդ մը կը գտնուի մի : ” Հայ-
 րը պատասխանեց . — շատ ա-
 դէկ , բայց թէ որ ասիկա մէկ
 արքայազուն մը չըլլայ և մի-
 այն ազնուասիրտ մարդ մը ըլ-
 լայ նէ , անասե՛նք ի՞նչ կ’ըսեա .
 — անհ , իմ հայրս , միթէ արքա-
 յազուն կամ ազնուաստահմ լլ-
 լա՞նէ , որ մարդը երջանիկ կ’ը-
 նէ . — ազնիւ ազջիկա , ապ-
 լիս , դուն բան մը մի լսե՛ր
 քովոցդ . հիմա տեսնո՛ւ որ հաս-
 նիսք , ձեզի անկումդ լսե՛կը
 մը ունիս , որ շատնոցաբնէ
 ՚ի վեր միտքս դրածու եմ : ”

Այրբ տունն որ հասան, քրք
 վրասնքք վրայ եկան հարց
 մուկքնե լով, քայց տեանե լով
 Շառլոզին լուսթիւնը, որ
 հանդարտ իր տեանեակը մտա
 և քանն մը չքսեր, իրեանց մէջը
 բախն, թէ ամչնալէն է, ի
 հարկէ իշխանիս երեսնանդամ
 չի տեսաւ :

Պ. Տիւ վար սէր ելաւ, ե
 րեքը մէկ տեղ իր տեանեակը
 կանչեց (ասոնք մամտացէք
 մէյսը, թէ ինչպէս դողդղա
 լով ներս մտան, Շառլոզէն ի
 դատ, ու սկից ետքը տրտում և
 լալով գուրս ելան, մտիկ բ
 րեք) և սկսաւ խօսիլ այսպէս .
 — դուք գիտէք, որ ինչպէս ա
 տենն աստենն ձեզի պատմեր էմ,

ես աշխարհ եկայ բարի ծնու
 ղայց զաւակ, բայց յոյժ աղ
 բառ. և շատ տարի ծառա
 յուլթիւն ըրի հարուստ և մեծ
 ոսկերիչ վաճառական Պ. Պէ
 լիլին խանուլթը ամենայն հա
 ւատարմութեամբ: Աստու
 քինի և բարերար անձը՝ իմ
 վրաս մեծ բարեկամութիւն և
 սէր մը ձգեց, և օր մը ինձի
 բառ. քեզի մեծ բարիք մը ը
 նելու արժանի կը տեսնամ, որ
 սրբան ապրիս զիս օրհնես. և
 ելաւ ինձի հինգ հարիւր քր
 ասկ ստակ և վաճառք տուաւ,
 ահաքեզ տեսնեմ ըսելով: Աստ
 ուած իմ բանս յաջողեց, բայց
 իր բանը ձախորդ երթալով,
 մահն ալ վրայ եկաւ մեռաւ,

մէկ հասիկ մանչ զաւակ մը
 թողուց : Արքոր լսեցի , վաղե-
 ցի գացի Քալէ քաղաքը , ու
 բովհետեւ իր տունը հոն էր .
 և տեսայ , որ մեռնելէն առաջ
 աս տղան հօրաքուրին (հալա)
 յանձներ էր , վասն զի իր կի-
 նը արդէն մեռած էր : Աս ու-
 ղեցի աս տղան իմ տունս առ-
 նել , ճար չեղաւ հօրաքոյրը չի
 թողուց , ուստի խօսք ըրինք ,
 որ ստկին շահը և պէտք եղա-
 ծը իրեն տամ , որ աս տղան
 առաքինի ու խելացի կրթու-
 թեամբ մեծնայ : Ահա քսանը
 վեց տարիէ , որ մեծցաւ և
 շնորհօք կարիճ մը եղաւ աս
 Պէլիը : Հիմայ հօրաքոյրը մե-
 ռաւ , և շատ չէ , որ ինքն ալ

Եկաւ հոս Փարիզ իս տե մե-
 լու : Այլքոր հետը խօսեցայ ,
 ճանչցայ որ կատարե ալ խե լա-
 ցի և համե տա անձ մըն է :
 Ախոր ըրի , որ ձեր մեկուն հե-
 տը կարգեմ , և իր հօրը ստա-
 կը ձեռքը տամ՝ պատարէս ա-
 զասիմ : Իրեն սիրտը մնալը
 ուեցի , որ մեկ ուրիշի մը հետ
 կատարած չըլլայ , տեսայ , որ
 ազատ է , և ինքն ալ կ'աղաչէր
 ա. կ'ըսէր , թէ ես քու զաւ ա-
 կըրդ եմ , դուն իմ հայրս ես ,
 ընտոր կ'աւ դես , ընտոր գիտես ,
 այնպէս ըրէ , միայն թէ քու
 տանդ հետ միանամ կատար իմ :
 Աս բանը իս տարակուսանքի
 մէջ ձգեց . ընտոր ընեմ , մեկ
 կողմէն անիկա կը սիրեմ զաւ .

կի ալէս , մէ կող կողմէն ալ գի-
 տեմ և կը ճանչնամ ձեր իրար-
 մէ տարբեր բնութիւնը և հակ-
 մուկը , մէ կերնիդ կը թռչի
 իմաստութեանց ետեւէն , մէ-
 կալը զինքը տուեր է հագուե-
 լու սաղուելու , միւսը կը
 կարծէ իսպաղ արիւն և թմրած-
 ես որ ամենուդ վրայ հաւա-
 սար սէր ունիմ , որերնիդ աս
 կարիճին առ ջեւ դնեմ , որ ե-
 թէ յանկարծ անոր վարուցը
 համեմատ չըլլայ , ի՞նչու ա-
 նոր կեանքը երեմ մրկեմ , և
 և իմ խղճմանքէս միշտ յան-
 դիմանու իմ : Աւստի մտմտա-
 ցի , որ այնպիսի խաղ մը խա-
 դամ , որ ձեզ ալ անիկա ալ
 համ և հաւան ընեմ , որ օր

մը և ոչ մէկդ ալ երեսիս չե
 տար, թէ ես մէկուն կամ մէ-
 կային կողմը բռնեցի աւելի
 սիրելու համար, այլ հա-
 մողուիք թէ դուք ձեր բնա-
 ւորութեամբը և դորձքովը
 ձեր վիճակը որոշեցիք, աղէկ
 նայ դէ՛հն ալ ձեր կողմանէ ե-
 դու և ձեր վրայ մնաց : Աւս-
 տի առաջ դիտնար, որ ես
 վարձքով քանի մը օրուան հա-
 մար բռնեցի այն պալատը,
 ան ծառաները, ան կառքը և
 ամեն հանդերձանքը, ձեզի բ-
 արի, թէ արքայազուն մը ձեզ
 մէն մէկը կ'ուզէ որ կարգուի,
 դիտնալով որ բնաւ մէկերնիդ
 ալ թիթ պոչ չէք ընէր, այլ
 ձեր որպիսութիւնը և բնու-

Թիւնք և ունեցած խելքեր
 նիդ իրեն կը ցուցնէք՝ այս
 պիտի մեծ իշխանի մը հաճոյ և
 զարմանալի երեւնալու բազ
 ճանքով, ինքն ալ ամեն մե
 կերնիդ քննելով ճանչնալով
 մտքին յարմարը և սրտին սի
 րածը ընտրէ, որ օր մը ինձի
 ըսելիք մը չունենայ: Հիմա
 ամեն մէկդ տարի իրեն, որ
 տեսաւ, քննեց և ճանչցաւ և
 վերջապէս մէջերնիդ մէկը գը
 տաւ, որ իր բուն սրտին սի
 րածն է: Աւստի դուն Վոսիի,
 որ լատիներէն և յունարէն լեզ
 ուներով և աշխարհագրական
 գիտութիւններով լեցուած ես,
 չի հաւնուեցար, վասն զի տան
 տիկին մէկը կ'ուզէ աս աս ա

քինի Պ. Պէլիլը : Եւ դուն
 Նկայէ , որ հազուած սաղ-
 ւած թեթեւաբարոյ աշխարհ
 հասէր բարք ունիս , և քեզ
 մէն 'ի զատ մէկու մը չէս հաւ-
 նիր , որովհետեւ ան տանտի-
 կին մը կուզէ , ուստի քեզի ալ
 չի հուսեցաւ :

Շառլօդը՝ որ հանգարտ հե-
 ղիկ լռիկ քաշուած կ'ապրէր ,
 ու դուք բանի մը տեղ չէիք
 դներ , բայց անիկա իր համար-
 ները տասն անգամ ձեզմէն ա-
 լեւի ստրկած , խելքը սիրտը
 զարդարած և իր պարտուցը
 հոգած ու ըլլալով , ահա իմ բա-
 րեկամիս սղան Պ. Պէլիլը՝ զա-
 նի սիրեց . . . վեր վար մի իյ-
 նաք մտիկ ըրէ՛ք ըսե՛լիս : Վա-

զը ինձի հոս տու՛նս պիտի գայ ,
 և քանի մք շաքաթէն՝ անոր
 հետ պիտի կարգեմ Շառլօղը
 և իրեն տամ պիտի հինգ հար-
 իւր քսակ պարտքս , որ իմ ունե-
 ցած հարստուէս գրեթէ երե-
 քին մէկն է : Այլու հարիւր
 յիսու՛ն քսակ ալ Շառլօղին
 օժիտ (ձէհէղ) պիտի տամ :
 Չեղի ալ ամեն մէկիդ նոյն
 չափ ասակ պիտի տամ և հի-
 մակու հիմա մինակ եկամու-
 տը ամսէ ամիս ձեր վրայ կ'ան-
 ցու՛նեմ : Նսոնք ընելէս ետքը՝
 զձեզ պիտի խաւրեմ հարիւր
 մընէ հետու իմ քրոջս տունը
 և երկիրնեքք , ուր ուղածնեք
 նուգ չափ փիլիսոփայութիւն
 քրէք , հագուեցէք , սգուեցէք

աչքէս հեռու, և տուն տեղ
 և զէք ընտոր որ կ'ուզէք, ես
 դէմ չեմ կենար: Այլ ես հոս
 Շառլոդին և էրկանը հետ՝ որ
 զաւկի պէս կը սիրեմ, պիտի
 նստիմ և կեանքս անցունեմ:
 Ահա իմ բացարձակ կամքս
 և հաստատուն որոշմունքս . . .
 լսեցիք մի աղջիկներս, պատ-
 ըաստուեցէք, որ աս իրիկուն
 ճամբայ ելէք և երթաք ըսած
 տեղս: 77

Կամտաացէք մէկ մը, թէ
 աս երկու աղջիկները ընտոր
 լացին, չէին ուզեր սրկէ հու-
 նա ոտմնին դնել և Փարիզէն
 դատու իլ, բայց ճար չեղաւ, ի-
 ըրիկունով կասքը եկաւ դուռ-
 ներնին, և Պ. Տիւփալ հետեր-

նին Վատամ Պոնթանը գնելով
 այսպէս ակամայ ելան գային
 իրենց հօր քրօջը տունը . . .
 ուր ապրեցան և մեռան պառ-
 ւած աղջիկներ, վասն զի ով
 որ զիրենք առնել կ'ուզէր, 'ի
 հարկէ վար աստիճանի մար-
 դիկ և իրենց օգտին համար
 ըլլալով, իրենք անոր չէին հաւ-
 ներ. իրենց հաւնած հարուստ
 մեծատուն կտրիճներն ալ ա-
 սոնց վարուցը և արտառոց սո-
 վորու թիւններուն նայելով, ա-
 նոնք ալ իրենց չէին հաւնէր
 և կը հեռանային:

Հաս չանցաւ սիրուն Հառ-
 լօղը՝ Պ. Պէլիլին հետ կար-
 գուեցաւ և Պ. Տիւ վալ նըս-
 տեցաւ տունը անոնց հետ

սերս սիրով և բարեկամութի
կապուած . և ապրեցան , ծաղ-
կեցան , ծըլեցան փառօք և եր-
ջանկութի մինչև 'ի ծերութի :

Հոս Վատամ Աւրովիլը եւ
պատմութիւնը լմնցնելն եւ-
տեւ , ըսաւ . ահա ձեզի կեն-
դանի օրինակ՝ աղջկանց գէշ
և աղէկ , գովելի և սպառսուե-
լի կըթուծեանց . հիմակ ձեր
միտքը՝ օրուն հետեւիլ և նը-
մանիլ է , ըսէք ինձի : Ամենքը
մէկէն թեւ երնին բացած վը-
րան ինկան և ըսին . — Աեցցէ
Հաւլօդ . . . մենք անոր օրի-
նակին ետեւէն պիտի երթանք
որ Վատամ ճոյ և մարդկան աւ-
ջեւ ձերմակերես երևնանք :

Р. У.

№ 6295



FD 1

No 6295